

9. ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմ

9.1. Քաղաքաշինության վարչության գլխավոր մասնագետ (ծածկագիր՝ 63-2.3-25)

Սահմանված կարգով մասնակցում է Մարզի բնակավայրերի գլխավոր հատակագծերի կազմման աշխատանքներին: Սահմանված կարգով առաջարկություններ է ներկայացնում Վարչության պետին Մարզի համայնքների վարչական սահմանների փոփոխման վերաբերյալ: Եզրակացություն է տալիս հանրապետական տարածքային զարգացման ու տարաբնակեցման նախագծերի և ուրվագծերի վերաբերյալ: Մասնակցում է բնակարանային և այլ շինարարության կազմակերպման, կապիտալ շինարարության և կապիտալ վերանորոգման պատվիրատուի գործառույթների իրականացման, քաղաքաշինական գործունեության վերահսկողության աշխատանքներին, միջոցներ է ձեռնարկում ապօրինի շինարարության կանխման, կասեցման և վերացման ուղղությամբ: Վարչության պետի հանձնարարությամբ ճարտարապետահատակագծային առաջադրանքի, տեխնիկական պայմանների, հեղինակային իրավունքի նորմերը պահպանելու պայմանով քաղաքաշինական փաստաթղթերում կատարում է փոփոխություններ, որոնք չեն պահանջում շինարարության թույլտվություն: Քաղաքաշինական գործունեություն իրականացնելու համար ճարտարապետահատակագծային առաջադրանք ստանալու համար նախապատրաստում է հայտ և ներկայացնում Վարչության պետին: Վարչության պետի հանձնարարությամբ մասնակցում է համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող տարածքներում կառուցապատողներին տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքների կատարման, հողերի և ամրակայված գույքի քաղաքաշինական նպատակային օգտագործման վերահսկմանը, կանխարգելում, կասեցնում է ինքնակամ շինարարության դեպքերը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը:

Նշված թափուր պաշտոնն զբաղեցնելու համար պահանջվում է՝

* բարձրագույն կրթություն՝ շինարարություն և ճարտարապետություն մասնագիտությունների գծով,

* սույն պաշտոնի անձնագրի 11-րդ կետի «ա» ենթակետում նշված համապատասխան աշխատանքային ստաժ (տե՛ս սույն հայտարարության 11.2 ենթակետին հաջորդող պարբերությունը),

* սույն պաշտոնի անձնագրի 11-րդ կետի «բ» ենթակետում նշված իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն:

Մրցույթը կկայանա 07.03.2013թ.՝ ժամը 1030-ին, Խորհրդի շենքում (ք. Երևան, Տեղյան 89):

